ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ ՆԱԽԱԳԾԻ ՄԱՍԻՆ

Funded by the European Union

Մարդու իրավունքների պաշտպանության խթանում և ազգային հաստատությունների հզորացում



Իրականացման ժամանակահատված: 01.06.2024 - 31.05.2027

ԱԼԳ երկրներ:

Armenia

ԵՄ ներդրում: € 2 300 000

Ընդհանուր բյուջե: € 2 411 791

Իրականացնող կազմակերպություն(ներ):

UNDP, UNICEF, UNFPA

Նախագծի նկարագրություն:

«Մարդու իրավունքների պաշտպանության խթանում և ազգային հաստատությունների հզորացում» ծրագիրը շարունակում է զարգացնել Եվրոպական միության կողմից ֆինանսավորված և ՄԱԶԾ-ի, ՅՈՒՆԻՍԵՖ-ի, ՄԱԲՀ-ի և ԵԱՀԿ-ի կողմից 2021-2024 թթ. իրականացված «Հաշվետու հաստատություններ և մարդու իրավունքների պաշտպանությունը Հայաստանում» ծրագրի արդյունքները: Ելնելով արժեքավոր քաղված դասերից ու գործընկերություններից՝ ծրագիրը նպատակաուղղված է Հայաստանում մարդու իրավունքների պաշտպանության և իրավունքի գերակայության ամրապնդմանը: Ծրագիրը կենտրոնանում է թիրախային հաստատությունների, այդ թվում՝ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի (ՄԻՊ), Արդարադատության նախարարության (ԱՆ), Միջազգային իրավական հարցերով ներկայացուցչի (ՄԻՀՆ), Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, Ներքին գործերի նախարարության, Փաստաբանների պալատի և Հանրային պաշտպանի գրասենյակի ինստիտուցիոնալ կարողությունների և ռազմավարական հաղորդակցության կատարելագործմանը՝ մարդու իրավունքների պաշտպանության լավարկման, լավ կառավարման և հաստատությունների աշխատանքի արդյունավետության բարձրացման նպատակով:

Ակնկալվող արդյունքներ:

1. ՄԻՊ-ի և ՄԻՀՆ-ի ինստիտուցիոնալ կարողությունների հզորացում՝ մարդու իրավունքների պաշտպանության և խթանման ու նրանց ծառայությունների հասանելիության լավարկման գործում:
2. ՄԻԳԾ 2023-2025 թթ. ծրագրի իրականացման, համակարգման, հաղորդակցության, մոնիթորինգի և գնահատման բարելավում և ՄԻԳԾ պատասխանատու կառույցների կարողությունների հզորացում:
3. Մարդու իրավունքների հարցերի վերաբերյալ հանրության իրազեկում՝ հատուկ ուշադրություն դարձնելով խոցելի և անապահով խմբերի մարդու իրավունքներին:
4. Արդարադատության նախարարության կարողությունների հզորացում մարդու իրավունքների, արդարադատության և սահմանադրական բարեփոխումների և հանրության իրազեկվածության բարձրացման մասով:
5. Աջակցման զոհակենտրոն ծառայությունների ընդլայնում՝ գենդերային հիմքով բռնությունից ու սեռական բռնությունից վերապրածների համար:
6. Խոցելի բնակչությանն անվճար որակյալ իրավաբանական օգնության տրամադրման մեխանիզմների ու կարողությունների խթանում: